



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ

21.09.2021թ.

ՇՆՈՐՀԱՎՈՐԱԿԱՆ ՈՒՂԵՐԶ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՆԿԱՆՈՒԹՅԱՆ 30-ԱՄՅԱԿԻ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ

Մեր անկախ հայրենիքը 30 տարեկան է:

Տակավիճակ երիտասարդ, բայց անկախության պահպանման ու հարատևության համար անընդհատ պայքարող, մաքառող, սակայն չկոտրվող ու անսասան հայրենիքս կանգուն է եղել միշտ ու կանգուն կմնա հավետ:

Պաթոսն այսօր ավելորդ է: Թերևս, պետք է ամուր գրկել մեր անկախ հայրենիքը, փայփայել ու տեր լինել, քանզի անկախ պետականություն ու ազատ հայրենիքում ապրելու և արարելու իրավունք են մեզ ժառանգել Վազգեն Սարգսյանը, Մոնթե Մելքոնյանը, մեր անկախությունն են պաշտպանել պատերազմներում իրենց կյանքը զոհաբերած տղաները. մեր երկրի սահմանների անսասանությունը, անկախ Հայաստանի անվտանգությունն է այս պահին պահպանում սահմանին կանգնած զինվորը, ու մենք այլ եք չունենք, քան տեր լինել մեր երկրին, ինչ էլ որ պատահի, տեր լինել, որքան էլ դժվար լինի:

Յուրաքանչյուրս մեր տեղում, մեր աշխատանքով պիտի ամրացնենք, հզորացնենք ու զարգացնենք առաջին քրիստոնյա պետությունը՝ 30-ամյա անկախ Հայաստանը՝ հանուն մեր վաղվա օրվա, հանուն մեր երեխաների և հանուն Արցախյան բոլոր պատերազմներում ընկած մեր եղբայրների:

Շնորհավո՛ր տոնդ, Հայաստանս:

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝

Ա. ՍԱՀԱԿՅԱՆ